

ԳՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՎԱՔԱՇՈՒ ՇԻՐԱԿԻՑ

Հնագիտական պեղումները, որոնք ծավալվել են Հայկական ՍՍՀ տարածքի վրա, միայն վերջին երեք տասնամյակների ընթացքում ի հայտ են բերել հին ու միջնադարյան բազմաթիվ մետաղե դրամներ, Դրանք ներկայացնում են Հայաստանի պատմության տարրեր ժամանակ-ներում շրջանառության մեջ եղած այն դրամական միավորները, որոնք ապրանքափոխանակու-թյան պրոցեսում ունեցել են գործառական նշանակություն:

Դրամագիտական նյութեր Հայաստանում գտնվում են նաև պատահական ձևով, դաշտային ու շինարարական աշխատանքների ժամանակ: Հայտնաբերվում են ոչ միայն առանձին, հատուկ-կենտ օրինակներով մետաղե հին ու միջնադարյան դրամներ, այլ հաճախ ամբողջական դրա-մական գանձեր, որոնք տարաբախտաբար միշտ չէ, որ պահպանվում են, այլ անցնում են ձեռքից ձեռք և երբեմն անհետ կորչում: Տեղական բնակչության մեջ, մասնավորապես առան-ձին հնահավաքների մոտ, պահվում են առավելապես տեղում գտնված դրամագիտական նյու-թեր, որոնց քննությունը նույնպես կարևոր է:

Վերջերս Հայաստանի պատմության պետական թանգարանը ձեռք բերեց դրամագիտական նյութերի մի նշանակալից հավաքածու՝ բաղկացած ավելի քան հինգ հարյուր հիսուն մետաղե դրամներից ու մեղալներից: Դրամագիտական նյութի հետ առկա են նաև երկու հին ու միջնա-դարյան կնիք-մատանիներ: Հավաքածուն կազմվել է շուրջ 60 տարիների ընթացքում լեհինա-կանի բնակիչ հնահավաք Արտավազդ Սանոյանի ջանքերով:

Քննությունը պարզել է, որ հիշյալ մետաղե հին դրամները հատ առ հատ հավաքվել են նախկին Ալեքսանդրապոլի (Լենինական) և նրան մերձակա գյուղերի բնակիչներից: Վերջիններս դրանք գտել են պատահականորեն՝ իրենց դաշտային ու շինարարական աշխատանքների ժա-մանակ: Ա. Սանոյանը փոխանակության կարգով իր հավաքածուն համալրել է նաև այնպիսի դրամական միավորներով, որոնք թեև բնորոշ չեն տեղական շրջանառությանը, բայց որոշակի հետաքրքրություն են ներկայացնում պատմական առումով:

Հավաքված դրամներից վաղագույնը վերաբերում է մ. թ. ա. IV դ., իսկ նորագույնը՝ մեր օրերին: Ընդհանուր առմամբ Շիրակում հավաքված դրամագիտական նյութերի մեծ մասը, հատկապես հին և միջնադարյան դրամների հիմնական խմբերը, ներկայացնում են պատմական Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններում տարածված այն մետաղյա դրամները, որոնց օրինակները հաճախ հայտնաբերվում են հնագիտական պեղումների շնորհիվ: Հավաքված դրամ-ների մեծ ամպը են նաև բացառիկ հազվագյուտ օրինակներ: Դրանցից է, օրինակ, Սիցիլիայի Սիրակուզա քաղաքում մ. թ. ա. IV դ. թողարկված փոքր արժեքափի, ատտիկյան արծաթե դրամի ¹/₆ մասը ներկայացնող միավորը: Վերջինս ենթակա է հատուկ քննության: Հարկ է նշել, որ Սիրակուզայի նմանօրինակ դրամի գոյության մասին մեր երկրում մինչև օրս հրա-տարակված տվյալներ չկան: Ա. Սանոյանի հավաքածուի արժեքավոր նյութերից է Արտա-վազդ IV-ի պատկերով արծաթե դրամը, որը բարեբախտաբար պահպանվել է հիանալի հստա-կությամբ: Այդ դրամից մինչև օրս հայտնի էին ընդամենը երեք օրինակ: Դրանցից մեկը պահ-վում է Բրիտանական թանգարանում, իսկ երկուսը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Իր կերտվածքի մանրամասնություններով մեր օրինակն առավելություններ ունի թե՛ Բրիտանական թանգարանի և թե՛ ամերիկյան մասնավոր ժողովածուներում պահվող նմուշների հանդեպ: Շիրակում հավաքված այս դրամների շարքում առկա է Սելևկյան Ալեքսանդր I Բալասի (152—144) պատկերով մի ուշագրավ դրամա: Սելևկյան այս դրաման կարևոր աղբյուր է ոչ չնչինիստական ժամանակներում թողարկված ատտիկյան կշռային լափի հիմնական միավորի ուսումնասիրության համար: Ա. Սանոյանի հավաքածուում առկա են նաև հռոմեական ղեկար-

1 Զարեհ Պտուկյան, Արտաշեսյան հարստության դրամները, Վիեննա, 1969, էջ 61, № 3. Երբորդ նմուշը հայտնի է Զորջ Մակլամոնդի (ԱՍՆ) դրամագիտական նյութերից:

ներ, որոնցից շատերը հաղվագյուտ են Հայաստանում։ Այդ տեսակետից հետաքրքրական են մասնավորապես Հոռմի հանրապետության շրջանի ձիավոր երկվորյակների պատկերներով արժանի դրամները՝ թողարկված մ. թ. ա. II—I դդ.։ Դրանց հետ միասին հավաքածուում ներկայացված են Հոռմեական կայսրության վաղ շրջանի դենարները, որոնց վրա դիտվում են տարրեր պատկերներ՝ նվիրված Օգոստոս կայսեր հաղթանակներին։ Կան նաև Կապադովկիայի Կեսարիա քաղաքում զրկազված Հոռմեական դրամներ, որոնք խիստ կարևոր են այդ շրջանի քաղաքական դեպքերի ժամանակագրությունը նշանելու համար։

Հայ-պարթևական առնչությունների տեսակետից հետաքրքրական են այն արծաթե դրամները, որոնցով ներկայացված են ավելի քան տասը դահակալների պատկերներ՝ նրանց տիտ-դոսների հունարեն արձանագրություններով։ Հավաքված դրամների շարքում ուշագրավ են նաև սասանյան արծաթե դրամները և դրանցից հատկապես այն միավորները, որոնք շրջանառության մեջ են մտել Սասանյանների հաստատման վաղ շրջանում։ Պահպանված են Սասանյան պետության հիմնադիր Արտաշիրի (224—241) և նրա մերձավոր հաջորդների՝ Շապուհ I-ի (241—272), ինչպես նաև Նարսի (293—303) դիմաքանդակներով արծաթե դրամներ՝ ընդարձակ պահպանված արձանագրություններով։ Բացի այդ, կան Հաղկետ, Փերոզ, Կավադ, Խոսրով, Որմիդդ վերջին Սասանյան դահակալների օրոք թողարկված դրամներ՝ զրկազված Իրանի տարրեր քաղաքներում՝ V—VII դդ.։

Պահպանված են համառոտագրություններով սասանյան դրամների վրա հիշատակված են նահապետներ, Իսթաթիր, Թիվ-Արտաշիր, Թեյ, Արարհար, Մերվ, Բիշափուր և այլ իրանական քաղաքների անուններ։

Շիրակում հաճախ են գտնվում Բյուզանդական կայսրության տարբեր ժամանակներում թողարկված դրամներ։ Պատահական չէ, որ բյուզանդական ծագում ունեցող պղնձե դրամներից, որոնք X—XI դդ. լայն տարածում ունեին Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք Անիում, առանձին նմուշներով ներկայացված են Ա. Սանդյանի հավաքածուի մեջ։ Այդ խմբի դրամական միավորներից հաղվագյուտ օրինակ է հատկապես Թեոֆանոս կայսեր գահակալության (919—944) վերջին տարիներին թողարկված արծաթե դրամը (միլիարենս), որի վրա արձանագրված են կայսեր և նրա զահաժառանգների անունները։ Նթե նկատի ունենանք, որ X դ. 30—40-ական թվականներին Բյուզանդիայում արծաթե դրամներ ընդհանրապես թիչ էին թողարկվում, ապա պարզ կդառնա այդ օրինակի կարևորությունը։ Ինչ վերաբերում է Ա. Սանդյանի հավաքածուի նյութերի մյուս խմբին, ապա դրանք առավելապես միջնադարյան դրամական միավորներ են, թողարկված ինչպես ասիական, այնպես էլ եվրոպական երկրներում։ Որոշ չափով ներկայացված են նաև նոր ու նորագույն ժամանակներին վերաբերող նյութեր, բայց որում ոչ միայն եվրոպական ու ասիական, այլև ամերիկյան դրամական միավորներ։

Հայաստանի պատմության համար կարևոր են այն օրինակները, որոնք թողարկվել են տեղում կամ ուղղակիորեն առնչվում են երկրի դրամական շրջանառության հետ։ Այդ տեսակետից հիշատակելի են 714—715 թթ. Արաբական խալիֆայության կողմից Դվինում զրկազված արծաթե դրամները, ինչպես նաև Անիում Հուլադույան Սուլեյման խանի անունով (1333—1344) զրկազված պղնձե դրամները և մի քանի այլ դրամական միավորներ, որոնք պահպանվել են հատուկ կենտ նմուշներով։

Ստորև ներկայացնում ենք առավելապես Շիրակում հավաքված և ներկայումս Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվող այդ հավաքածուի նյութերի ընդհանուր ցու-

ԽԱՉԱՏՈՒՐ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

* Միշտ չէ, որ կարողացել ենք պահպանել դրամական միավորների դասակարգման ժամանակագրական կարգը։ Նման շեղումները գերազանցապես պայմանավորված են աշխարհագրական, մասամբ նաև պատմական դարաշրջանները պահպանելու և նյութը շմասնատելու հանգամանքներով։

ԱՆՏԻԿ ՇՐՋԱՆ

ԴԱՍԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

արժաթ

- 1 Տետրադրախմա, թողարկված Կարթագենում, մ. թ. ա. IV դ., դիցուհու և ձիու պատկերներով, առանց արձանագրության:
- 2 Օբոլոս, թողարկված Սիցիլիայի Սիրակուզա քաղաքում, մ. թ. ա. IV դ., Պերսեֆոնե դիցուհու և քառաձի մարտակառքի պատկերներով, ինչպես նաև քաղաքի անվան հունարեն արձանագրությամբ:

ՀԵԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

ԱԼԵՎՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ՏԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

արժաթ

- 3—4 Տետրադրախմա, թողարկված Ալեքսանդր Մակեդոնացու (336—323) գահակալության տարիներին, Հերակլես-Ջևս պաշտամունքային պատկերներով, ինչպես նաև միապետի անվան հունարեն արձանագրությամբ:
- 5 Տետրադրախմա, թողարկված Ալեքսանդր Մակեդոնացու և Ջևսի պատկերներով, ինչպես նաև միապետի անվան հունարեն արձանագրությամբ:
- 6—10 Դրախմա, թողարկված Ալեքսանդր Մակեդոնացու գահակալության տարիներին, պաշտամունքային նույն պատկերներով ու նշաններով, ինչպես նաև հունարեն արձանագրությամբ:

պղինձ

- 11 Երկքաղկոս, թողարկված Ալեքսանդր Մակեդոնացու գահակալության տարիներին, ձիավոր միապետի և Հերակլեսի պատկերներով, ինչպես նաև հունարեն արձանագրությամբ:
- 12 Քաղկոս, թողարկված Ալեքսանդր Մակեդոնացու գահակալության տարիներին, միապետի պատկերով և պաշտամունքային նշաններով, ինչպես նաև հունարեն արձանագրությամբ: Հայաստանում հազվագյուտ օրինակ է:

ՍԵԼՎԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

արժաթ

- 13 Դրախմա, թողարկված Ասորիքում, Ալեքսանդր I Բալասի և Ապոլոնի պատկերներով, ինչպես նաև միապետի անվան ու տիտղոսների հունարեն արձանագրությամբ:
- 14—15 Տետրադրախմա, թողարկված Ասորիքում, Անտիոքոս VII Էվերգետոսի (138—129) գահակալության տարիներին, միապետի և Աթենասի պատկերներով, ինչպես նաև հունարեն արձանագրությամբ:

ԿԱՊԱԴՈՎԿՅԱՆ ԴՐԱՄՆԵՐ

արծաթ

16—18 Դրախմա, թողարկված Կեսարիայում, Արիարաթ VII Փիլոմետորի (111—99) գահակալության տարիներին, միապետի և Աթենասի պատկերներով, ինչպես նաև հունարեն արձանագրությամբ:

ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

արծաթ

19—23 Դրախմա, թողարկված Միհրդատ II-ի (128—88) գահակալության տարիներին, արքայի և պարթևաց նահապետի պատկերներով, ինչպես նաև հունարեն արձանագրությամբ:

24—29 Դրախմա, թողարկված Միհրդատ II-ի գահակալության տարիներին, սույն պատկերազրական տվյալներով, բայց արքան ներկայացված է ղլանաձև թագով, օժտված ականջակալներով և ճակատին կապված ժապավենով:

30—32 Դրախմա, թողարկված Գոտարդ I-ի (90—80) գահակալության տարիներին, թագավորի և պարթևաց նահապետի պատկերներով, ինչպես նաև հունարեն արձանագրությամբ:

33 Դրախմա, թողարկված Որոդես I-ի (80—77) գահակալության տարիներին, թագակիր արքայի և պարթևաց նահապետի պատկերներով, ինչպես նաև հունարեն արձանագրությամբ:

34 Դրախմա, թողարկված Հրահատ III-ի (70—57) գահակալության տարիներին, արքայի (առանց թագի, վարսակալ ժապավենով) ու պարթևաց նահապետի պատկերներով, ինչպես նաև հունարեն արձանագրությամբ:

35 Դրախմա, թողարկված Միհրդատ III-ի (57—54) գահակալության տարիներին, երիտասարդ արքայի պատկերով և նույն տվյալներով:

36—43 Դրախմա, թողարկված Որոդես II-ի (57—38) գահակալության տարիներին, արքայի և պարթևաց նահապետի պատկերներով, ինչպես նաև նրանց անունների ու տիտղոսների հունարեն գրություններով:

44 Տետրադրախմա, թողարկված Հրահատ IV-ի (38—2) գահակալության տարիներին, արքայի և հաղթության դիցուհու պատկերներով, ինչպես նաև հունարեն արձանագրություններով:

45 Դրախմա, թողարկված Արտավան II-ի (10—38) գահակալության տարիներին, արքայի և պարթևաց նահապետի պատկերներով, ինչպես նաև հունարեն արձանագրություններով:

46—47 Դրախմա, թողարկված Գոտարդ II-ի (40—51) գահակալության տարիներին, արքայի և պարթևաց նահապետի պատկերներով, ինչպես նաև հունարեն արձանագրություններով:

48 Դրախմա, թողարկված Վաղարշ IV-ի (147—191) գահակալության տարիներին, արքայի և պարթևաց նահապետի պատկերներով, ինչպես նաև հունարեն արձանագրություններով:

ԱՐՏԱՇԵՆՈՅԱՆ ԴՐԱՄՆԵՐ

աբժաթ

- 49 Դրախմա, թողարկված հայոց մայրաքաղաքում, Տիգրան II-ի (95—55) գահակալության տարիներին, միապետի և քաղաքամայր դիցուհու պատկերներով, ինչպես նաև հունարեն «Արքայից արքա Տիգրանի» արձանագրությամբ:
- 50 Դրախմա, թողարկված 4—6 թթ., Ատրպատականի ու Հայաստանի թագավոր Արտավազդ IV-ի և Հռոմի կայսր Օգոստոս Օկտավիանոսի պատկերներով, ինչպես նաև նրանց անունների ու տիտղոսների հունարեն արձանագրությամբ:

ԿՈՒՆԻԴՅԱՆ ԴՐԱՄՆԵՐ

աբժաթ

- 51—52 Դրախմա, թողարկված Կոլխիդայում, III—II դդ., մարդկային ու կենդանական պատկերներով, առանց արձանագրությունների:

ՊԵՂՊՈՆԵՍՅԱՆ ԴՐԱՄՆԵՐ

աբժաթ

- 53 Կես դրախմա, թողարկված Սիկիոն քաղաքում, III—II դդ., Ապոլոնի և թեփատարած արծվի պատկերներով, ինչպես նաև հունարեն մենագրերով:

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

աբժաթ

- 54 Դենարիոս, թողարկված մ. թ. ա. II դ., Ռոմայի և Յուլիոսների (քառածի մարտակառքի վրա) պատկերներով ու լատիներեն արձանագրությամբ:
- 55 Դենարիոս, թողարկված Հռոմում, 155—120 թթ., Ռոմայի և երկվորյակների պատկերներով, ինչպես նաև մաշված լատիներեն արձանագրությամբ:
- 56 Դենարիոս, թողարկված Հռոմում, 135—134 թթ., նույն պատկերներով, բայց Գայոս Տերանտիուսի և Լուկիանուսի անունների լատիներեն արձանագրությամբ:
- 57 Դենարիոս, թողարկված Հռոմում, մ. թ. ա. II դ., մաշված պատկերներով և լատիներեն արձանագրությամբ:
- 58 Դենարիոս, թողարկված Հռոմում, 54—51 թթ., Հուլիոս Կեսարի դալիական հաղթանակների առթիվ:
- 59 Դենարիոս, թողարկված Հունաստանում, մ. թ. ա. 36 թ., Մարկոս Անտոնիոսի և հաղթության կոթողի պատկերներով, ինչպես նաև զորավարի անվան ու տիտղոսների լատիներեն արձանագրությամբ:

ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

արծաթ

- 60 Դենարիուս, թողարկված 29—27 թթ., Օգոստոսի և հաղթության կոթողի պատկերներով:
- 61 Դենարիուս, թողարկված Իսպանիայում, 18—17 թթ., Օգոստոսի և հաղթության կոթողի պատկերներով, ինչպես նաև կայսեր անվան ու տիտղոսների լատիներեն արձանագրությամբ:
- 62 Դենարիուս, թողարկված Իսպանիայում, 19—16 թթ., Օգոստոսի պատկերով և ռալմի նշաններով, ինչպես նաև կայսեր անվան ու տիտղոսների լատիներեն արձանագրությամբ:
- 63 Դենարիուս, թողարկված Գալլիայում (Լուկոնում) 12—11 թթ., Օկտավիանոսի և ձկնածե իրանով այծյամի պատկերներով, ինչպես նաև կայսեր անվան ու տիտղոսների լատիներեն արձանագրությամբ:
- 64—73 Դենարիուս, թողարկված մ. թ. ա. 2—մ. թ. 11 թթ., Օգոստոսի և նրա որդեգիրներ Գայուսի ու Լուցիուսի պատկերներով, ինչպես նաև կայսեր անվան ու տիտղոսների լատիներեն արձանագրությամբ:
- 74 Դենարիուս, թողարկված Հռոմում, Ներոնի (54—68) գահակալության տարիներին, կայսեր և գահին բազմած Յուլիետերի պատկերներով, ինչպես նաև լատիներեն արձանագրությամբ:
- 75 Դենարիուս, թողարկված Հռոմում, Վեսպասիանոսի (69—79) գահակալության տարիներին, կայսեր պատկերով և լատիներեն մաշված արձանագրությամբ:
- 76 Դենարիուս, թողարկված Հռոմում Տրայանոսի (98—117) գահակալության տարիներին, կայսեր ու Վիկտորիայի պատկերներով, ինչպես նաև լատիներեն մաշված արձանագրությամբ:
- 77 Դենարիուս, թողարկված Հռոմում, Տրայանոսի գահակալության տարիներին, կայսեր և Վեստայի պատկերներով, ինչպես նաև լատիներեն մաշված արձանագրությամբ:
- 78 Դենարիուս, թողարկված Հռոմում, Տրայանոսի գահակալության տարիներին, կայսեր և առատության դիցուհու պատկերներով, ինչպես նաև լատիներեն մաշված արձանագրությամբ:
- 79 Դենարիուս, թողարկված Հռոմում, Հադրիանոսի (117—138) գահակալության տարիներին, կայսեր և դիցուհու պատկերներով, ինչպես նաև լատիներեն մաշված արձանագրությամբ:
- 80—81 Դենարիուս, թողարկված Հռոմում Անտոնինուս Պիուսի (138—161) գահակալության տարիներին, կայսեր և առատության դիցուհու պատկերներով, ինչպես նաև լատիներեն մաշված արձանագրությամբ:
- 82 Դենարիուս, թողարկված Հռոմում, Անտոնինուս Պիուսի գահակալության տարիներին, կայսեր և Վեստայի պատկերներով, ինչպես նաև լատիներեն մաշված արձանագրությամբ:
- 83 Դենարիուս, թողարկված Հռոմում, 164—182 թթ., կայսրուհի Լուցիլլայի պատկերով և նրա անվան լատիներեն արձանագրությամբ:
- 84 Դենարիուս, թողարկված Հռոմում, Գետայի (209—212) գահակալության տարիներին, պատանի կայսեր և պողաբերության դիցուհու պատկերներով:

- րով, ինչպես նաև լատիններեն մաշված արձանագրությամբ:
- 85 Անտոնիանուս, թողարկված Հռոմում, Գարդիան III-ի (238—244) գահակալության տարիներին, կայսեր և դիցուհու պատկերներով, ինչպես նաև լատիններեն մաշված արձանագրությամբ:
- 86 Անտոնիանուս, թողարկված Հռոմում, Գարդիան III-ի գահակալության տարիներին կայսեր և նիզակավոր զինվորի պատկերներով, ինչպես նաև լատիններեն արձանագրությամբ:
- 87 Անտոնիանուս, թողարկված Հռոմում, Պոստումուսի (259—268) գահակալության տարիներին, կայսեր և Փիլիպոսի պատկերներով, ինչպես նաև լատիններեն արձանագրությամբ:
- 88 Սիլիբվա, թողարկված Հռոմում, Կոստանտինուս Գալլուսի (351—354) գահակալության տարիներին, կայսեր պատկերով և լատիններեն արձանագրությամբ:
- 89—90 Սիլիբվա, թողարկված Հռոմում, Թեոդոսիուս I-ի (379—395) գահակալության տարիներին, կայսեր պատկերով և լատիններեն արձանագրությամբ:

պղինձ

- 91 Դուպոնդուս, թողարկված Հռոմում, Մարկոս Ավրելիուսի (161—180) գահակալության տարիներին, կայսեր և Մարսի պատկերներով, ինչպես նաև լատիններեն արձանագրությամբ:
- 92 Սեստերց, թողարկված Հռոմում, Գորդիան III-ի գահակալության տարիներին, կայսեր ու Մարսի պատկերներով, ինչպես նաև լատիններեն արձանագրությամբ:
- 93 Սեստերց, թողարկված Հռոմում, Վալերիան II-ի (253—260) գահակալության տարիներին, կայսեր և Մարսի պատկերներով, ինչպես նաև լատիններեն արձանագրությամբ:
- 94 Սիլիբվա, թողարկված Թեոդոսիուս I-ի գահակալության տարիներին, կայսեր պատկերով և խաչի նշանով, ինչպես նաև լատիններեն մաշված արձանագրությամբ:
- 95 Ֆուլիս, թողարկված Հռոմում, Կոնստանտինուս I-ի (305—306) գահակալության տարիներին, կայսեր և Մարսի պատկերներով, ինչպես նաև լատիններեն մաշված արձանագրությամբ:

ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՆԱՀԱՆԻԱՅԻՆ ԴՐԱՄՆԵՐ

պղինձ

- 96 Քադկոս, թողարկված Կեսարիայում, Հանդրիանոսի գահակալության տարիներին (117—138), կայսեր և տեղական նահանգապետի պատկերներով, ինչպես նաև հունարեն մաշված, անընթեռնելի արձանագրությամբ:
- 97 Քադկոս, թողարկված Կեսարիայում, քաղաքային ինքնավարության կողմից, մ. թ. III դ., ցորենի երեք ցողունի և բրգաձև լեռան պատկերներով, ինչպես նաև հունարեն մաշված արձանագրությամբ:
- 98 Ստատեր, թողարկված Բոսֆորի թագավորության կողմից IV դ., տեղա-

կտն միասկտի և Հոսմի կայսեր սխեմատիկ պատկերներով, ինչպես նաև լաւիներին մաշված արձանադրությամբ:

ԱՆՏԻԿ ՇՐՋԱՆԻ ԱՆՈՐՈՇ ԴՐԱՍՆԵՐ

արծաթ

- 99 Տևտրադրախմա, որի մի կողմին պատկերված է պսակաւարդ մարդկային դեմք (ձախահայաց), իսկ մյուս կողմին՝ հարձակողական դիրքով աջահայաց թեւովոր առյուծ: Պատկերները բարձրաքանդակ են, որոնց շուրջը սլահպանվել են հունարեն մաշված դրեր:
- 100 Տևտրադրախմա, որի վրա պատկերված է տղամարդու գանգրահեր գլուխ, (առանց մորուքի) դեմքով դեպի ձախ, բարձրաքանդակ և շորս ձիերով լծված դեպի աջ արշավող երկանիվ մարտակառք: Վերջինս վարում է առնական մի կերպարանք: Մարտակառքից ներքև հունարեն մաշված պրեր կան:
- 101 Դենարիուս, թողարկված Հռոմեական կայսրության վաղ շրջանում: Գլուխը յուրինը և պատկերները հաւիվ են նշմարվում:

պղինձ

- 102 Քաղկոս, թողարկված Բաքոսի և Վենուսյի պատկերներով: Յուրաքանչյուր դիցական կերպարանքի կողքին նշված է մեկ հունարեն մենագիր:
- 103 Դրախմա, թողարկված էլամի Արշակունյաց թագավոր Հրահատի (96—129) պատկերով, բայց առանց տեղանվանը վերաբերող տվյալների:
- 104—125 Խիստ մաշված, սակայն անտիկ շրջանի, մասնավորապես ուշ հելլենիստական և հռոմեական պատկերազրությանը բնորոշ, տարբեր կշռային սխեմաների պատկանող դրամական միավորներ, որոնք ենթակա են առանձին քննության:

ԿՆՂՄ ԴՐԱՄՆԵՐ

արծաթ

- 126 Դեկադրախմա, Արեթուսյի, քառաձի մարտակառքի, Զևսի և վերջինիս պսակ բերող Նիկեի պատկերներով ու ողմի հաղթության նշաններով, ինչպես նաև հունարեն մենագրով: Ընդօրինակված է ձուլման եղանակով, նոր ժամանակներում, անցյալից մնացած (մ. թ. ա. IV դ.) իսկական օրինակի նմանահանությամբ:
- 127 Տևտրադրախմա, Ալեքսանդր Մակեդոնացու և Զևսի պատկերներով, ինչպես նաև գահակալի անվան հունարեն արձանագրությամբ ու դրամի թողարկմանը վերաբերող մենագրով, բայց իր կերտվածքով հելլենիստական արվեստին անհարիր, ուշ ժամանակներում արված ընդօրինակություն է:
- 128 Դրախմա, Տիգրան II-ի և հայոց քաղաքամայր դիցուհու պատկերներով, ինչպես նաև գահակալի անվան ու տիտղոսի հունարեն արձանագրու-

թյամբ: Հնուց մնացած իսկական նմուշի անհաջող նմանությունն է: Ըստ որում, ընդօրինակությունը կատարվել է դրվագման եղանակով:

ՄԻՋՆԱԴԱՐ

ՍԱՍԱՆՅԱՆ ԴՐԱՄՆԵՐ

արծաթ

- 129 Դրախմա, թողարկված Արտաշիր I-ի գահակալության տարիներին, արքայի ու նրա պաշտամունքի (զրադաշտական) պատկերներով, ինչպես նաև պահլավերեն արձանագրություններով:
- 130—131 Դրախմա, թողարկված Շապուհ I-ի գահակալության տարիներին, պատկերագրական նույն տվյալներով, ինչպես նախորդը, բայց դրամներից մեկը եզրերից տեղ-տեղ կոտրված է:
- 132 Դրախմա, թողարկված Նարսեի գահակալության տարիներին, պատկերագրական նույն տվյալներով, ինչպես նախորդները, բայց եզրից տեղ-տեղ կոտրված է:
- 133 Դրախմա, թողարկված Հազկերտ I-ի (399—430) գահակալության տարիներին, Նեհավենդ քաղաքում, արքայի և նրա պաշտամունքի (զրադաշտական) պատկերներով ու նշաններով, ինչպես նաև պահլավերեն արձանագրություններով:
- 134 Դրախմա, թողարկված Փերոզի (457—484) գահակալության տարիներին, Ֆարսում (Իսթախր), արքայի, ասորուշանի և քրմերի պատկերներով, ինչպես նաև պահլավերեն արձանագրությամբ:
- 135 Դրախմա, թողարկված Կավադի (487—531) գահակալության 7-րդ տարում, Ռիվ-Արտաշիր քաղաքում, պատկերագրական նույն տվյալներով:
- 136 Դրախմա, թողարկված Կավադի գահակալության 31-րդ տարում, Նեհավենդ քաղաքում, արքայի, ասորուշանի և քրմերի պատկերներով, ինչպես նաև պահլավերեն արձանագրություններով:
- 137 Դրախմա, թողարկված Խոսրով Անուշիրվանի (531—579) գահակալության 4-րդ տարում, Ռեյ քաղաքում, արքայի, ասորուշանի և քրմերի պատկերներով, ինչպես նաև պահլավերեն արձանագրություններով:
- 138 Դրախմա, թողարկված Խոսրով Անուշիրվանի գահակալության 14-րդ տարում, Աբրշահր քաղաքում, պատկերագրական նույն տվյալներով:
- 139 Դրախմա, թողարկված Խոսրով Անուշիրվանի գահակալության 31-րդ տարում, Մերվ քաղաքում, արքայի, ասորուշանի և քրմերի պատկերներով, ինչպես նաև պահլավերեն արձանագրություններով:
- 140 Դրախմա, թողարկված Ումիդ IV-ի (579—591) գահակալության 4-րդ տարում, Բիշափուր քաղաքում, արքայի, ասորուշանի և քրմերի պատկերներով, ինչպես նաև պահլավերեն արձանագրություններով:
- 141 Դրախմա, թողարկված Ումիդ IV-ի գահակալության 18-րդ տարում, պարսից Իրաքի Նեհավենդ քաղաքում, արքայի, ասորուշանի և քրմերի պատկերներով, ինչպես նաև պահլավերեն արձանագրություններով:
- 142 Դրախմա, թողարկված Խոսրով II Փարվեզի (591—628) գահակալության 11-րդ տարում, Նեհավենդ քաղաքում, պատկերագրական նույն տվյալ-

ներով, ինչպես նախորդը:

- 143 Դրամագիտական հավաքածու II Փարվեզի գահակալության 18-րդ տարում, Մերվ քաղաքում (հորասան) պատկերազրական նույն տվյալներով, ինչպես նախորդները:
- 144 Դրամագիտական հավաքածու II Փարվեզի գահակալության 17-րդ տարում, Զերալի Ռեյ քաղաքում, պատկերազրական նույն տվյալներով, ինչպես նախորդները:
- 145 Դրամագիտական հավաքածու II Փարվեզի գահակալության 37-րդ տարում, պարսից Իրաքի նահապետ քաղաքում, նույն տվյալներով, ինչպես նախորդ օրինակները:
- 146 Դրամագիտական հավաքածու II Փարվեզի գահակալության տարիներին, Զերալի Ռեյ քաղաքում, ջնջված տառերով:

ԹՅՈՒՋԱՆԻԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ ,

արծաթ

- 147—151 Կրկնակի միլիարենս, թողարկված Կ. Պոլսում, Հերակլեսի և Հերակլես-Կոնստանդինի համատեղ գահակալության (613—630) տարիներին, նրանց պատկերներով ու հունարեն արձանագրություններով, ինչպես նաև քրիստոնեական խաչի նշանով:
- 152 Կրկնակի միլիարենս, թողարկված Կ. Պոլսում, 614—630 թթ., Հերակլեսի և նրա երկու գահաժառանգների՝ Հերակլես-Կոնստանդինի ու Հերակլեսի պատկերներով, ինչպես նաև խաչի նշանով ու հունարեն արձանագրություններով:
- 153—155 Կրկնակի միլիարենս, թողարկված Կ. Պոլսում, Կոստանս II-ի (641—668) գահակալության տարիներին, կայսեր պատկերով, խաչի նշանով, ինչպես նաև հունարեն արձանագրությամբ:
- 156 Միլիարենս, թողարկված Կ. Պոլսում, Ռոմանոս I-ի (919—944) գահակալության սկզբնական տարիներին, կայսեր և նրա ժառանգների՝ Կոնստանդինի, Ստեփանոսի և Կոնստանդին Լեկապենոսի անունների հիշատակությամբ, ինչպես նաև Քրիստոսի պատկերով:

պղինձ

- 157 Ֆուլիս, թողարկված Հուստինիանոս II-ի (527—565) գահակալության տարիներին, կայսեր պատկերով, 40 նումի արժեքիչով և հունարեն արձանագրությամբ:
- 158 Ֆուլիս, թողարկված Մորիկ-Տիբերիոսի (582—602) գահակալության տարիներին, Կիզիկ քաղաքում, 582—585 թթ., կայսեր պատկերով, 40 նումի արժեքիչով և հունարեն արձանագրությամբ:
- 159 Ֆուլիս, թողարկված Կոստանս II-ի գահակալության տարիներին, կայսեր պատկերով, 40 նումի արժեքիչով և հունարեն մաշված արձանագրությամբ:
- 160 Ֆուլիս, թողարկված VI—VII դդ., 40 նումի արժեքիչով և պատկերազրական մաշված տվյալներով:
- 161 Ֆուլիս, թողարկված Կ. Պոլսում, Ռոմանոս I-ի (919—944) գահակալության տարիներին, կայսեր պատկերով և հունարեն արձանագրությամբ:

- 162—173 Ֆոլիս, թողարկված Կ. Պոլսում, Վասիլ II Բուլղարասպանի գահակալության (976—1025) տարիներին, Քրիստոսի պատկերով և միապետի անվան ու տիտղոսի հունարեն արձանագրությամբ:
- 174—177 Ֆոլիս, թողարկված Կ. Պոլսում, Միքայել IV Պափլագոնացու (1034—1041) գահակալության տարիներին, Քրիստոսի պատկերով և միապետի անվան ու տիտղոսի հունարեն արձանագրությամբ, ինչպես նաև խաչի նշանով:
- 178 Ֆոլիս, թողարկված Կ. Պոլսում, Կոստանդին IX Մոնոմախի (1042—1055) գահակալության տարիներին Քրիստոսի և տիրամոր պատկերներով, վերցված կետավոր շրջանակների մեջ, հունարեն մաշված արձանագրությամբ:
- 179 Ֆոլիս, թողարկված Կ. Պոլսում, կայսրուհի Թեոդորայի (1055—1056) գահակալության տարիներին, Քրիստոսի պատկերով և կայսրուհու անվան ու տիտղոսի հունարեն արձանագրությամբ:
- 180 Ֆոլիս, թողարկված Կ. Պոլսում, Կոստանդին X Դուկասի (1059—1067) գահակալության տարիներին, Քրիստոսի, կայսեր և կայսրուհի Եվդոկիայի պատկերներով, նրանց անունների հունարեն արձանագրությամբ և խաչի կենտրոնազարդ նշանով:
- 181 Ֆոլիս, թողարկված Կ. Պոլսում, Կոստանդին X (1059—1067) Դուկասի գահակալության տարիներին, նույն տվյալներով, ինչպես նախորդը, բայց դրվագումը կատարվել է դեռևս Հովհաննես Զմշկիկի (969—976) կայսրության տարիներից մնացած դրամի վրա և այդ իրողությունը դիտվում է հին պատկերագրության դրոշմից պահպանված նշաններով:
- 182 Ֆոլիս, թողարկված Կ. Պոլսում, Ռոմանոս IV Դիոգենեսի (1067—1071) գահակալության տարիներին, Քրիստոսի հանդիպահայաց պատկերով, և խաչի մեծադիր նշանով ու հունարեն արձանագրությամբ:
- 183—184 Ֆոլիս, թողարկված Կ. Պոլսում, Միքայել VII Դուկասի (1071—1078) գահակալության տարիներին, Քրիստոսի պատկերով, խաչի նշանով և հունարեն արձանագրությամբ:
- 185—188 Ֆոլիս, թողարկված Քրիստոսի պատկերով և հունարեն արձանագրությամբ, ինչպես նախորդ օրինակները, բայց պատկերագրական տրվյալները խիստ մաշված են:

ՕՄԱՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

ԱՐԱՐԱԿԱՆ ԽԱՆՁԱՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄՆԵՐ

արծաթ

- 189—190 Դիրհեմ, թողարկված Հայաստանում (Դվին), հիշրայի 96 (714—715) թ., քուֆի գրեղաձևի արաբերեն արձանագրություններով, քաղված Ղուրանի 112 գլխից:

ԱՐԱՍՏՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

արծաթ

- 191 Դիրհեմ, թողարկված Իրաքում (ալ-Քուֆա), հիշրայի 158 (774—775) թ., մահմեդականության բանաձևի առաջին և երկրորդ մասերի, ինչպես նաև Ղուրանի 61-րդ գլխի 33-րդ ոտանավորից քաղված խոսքերի արաբերեն

(բուֆի գրեւածեի) արձանագրությամբ:

- 192 Դիրհեմ, թողարկված Բաղդադում (Մեդինաթ աս-Սալամ), հիշրայի 167 (777—778) թ., արձանագրությունների նույն տվյալներով, ինչպես նախորդը:
- 193 Դիրհեմ, թողարկված Աֆրիկայում (ալ-Աբբասիյա), նույն տվյալներով, ինչպես նախորդը, բայց տարեթիվը չի պահպանվել: Նմանօրինակ արծաթե աբբասյան դրամների մեղ հայտնի օրինակները վերաբերում են Հարուն ալ-Ռաշիդի գահակալության (786—809) տարիներին:
- 194 Դիրհեմ, թողարկված Իրանում (ալ-Մուհամմեդիյա), ալ-Ամին Մահմեդ խալիֆայի (809—813) անվան հիշատակությամբ, բայց ջնջված տարեթիվով:
- 195 Դիրհեմ, թողարկված Իրաքում, ալ-Մուքտադիր խալիֆայի գահակալության (908—932) տարիներին, հիշրայի 302 (914—915) թ., բայց քաղաքի անվան ջնջված արձանագրությամբ:
- 196 Կես դրախմա, թողարկված Իրանի Թաբարիստան մարզում, սասանյան դրամների ընդօրինակությամբ, աբբասյան նահանգապետ Օմարի անվան արաբներն արձանագրությամբ, հոսորով Անուշիրվանի պատկերով, ինչպես նաև տարեթվի ու երկրամասի պահպանման արձանագրություններով: հիշրայի 137 (789) թ. հիշատակությամբ:

ԱՄԻՐԱՅԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇԻՋԱՆ

ՋԱՖԱՐՅԱՆ ԴՐԱՄՆԵՐ

արծաթ

- 197 Դիրհեմ, թողարկված ալ-Ամիր Մուզաֆար ալ-Մանսուր Ալի Իբն Ջաֆարի անվան և մահմեդականության բանաձևի արաբներն արձանագրությամբ: Դրամը եզրից կտրված է և տարեթվի հիշատակությունից պահպանվել է միայն արաբներն ճշորս հարյուր» բառը: Հավանաբար թողարկվել է X դ. վերջին կամ XI դ. սկզբին:

ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇԻՋԱՆ

ԻԼԴԵԳԻՋՅԱՆ ԴՐԱՄՆԵՐ

սղդինձ

- 198 Դիրհեմ, թողարկված աթաբեկ Կիլիկ Արսլանի (1186—1191) իշխանության տարիներին, առանց տարեթվի և տեղանվան հիշատակության, մաշված արաբներն արձանագրությամբ:
- 199—200 Դիրհեմ, թողարկված XII—XIII դդ., Իլդեգիզյան աթաբեկների կողմից, խիստ մաշված, անընթեռնելի արաբներն արձանագրություններով, առանց տարեթվերի և տեղանունների հիշատակության:
- 201 Դիրհեմ, թողարկված XII—XIII դդ., Իլդեգիզյան աթաբեկների կողմից, նույն տվյալներով, ինչպես նախորդները, բայց կրկնադրոշմ արաբատառ նշաններով:

ԷՅՈՒԲՅԱՆ ԴՐԱՄ

պղինձ

202 Դիրհեմ, թողարկված Միջագետքում, ալ-Մելիք ալ-Ադիլ Սեյֆ ադ-Դինի (1200—1218) գահակալության տարիներին, էյուլյան միապետի պատկերով և խալիֆա ան-Նասիր լդին-Ալլահի (1180—1225) անվան արաբերեն արձանագրությամբ:

ՌՈՒՄԻ ՍՈՒԼթԱՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄՆԵՐ

առծաթ

203—205 Դիրհեմ, թողարկված Սեբաստիայում, սուլթան Քայ-Քուբադ իբն Քայ-Խուսրաուի (1219—1237) գահակալության տարիներին, նրա անվան ու տիտղոսների արաբերեն արձանագրությամբ:

206 Դիրհեմ, թողարկված Սեբաստիայում, սուլթան Քայ-Խուսրաու իբն Քայ-Քուբադի (1237—1246) գահակալության տարիներին, նրա անվան ու տիտղոսների արաբերեն արձանագրությամբ, ինչպես նաև արևի ու առյուծի պատկերներով:

ՎՐԱՍՏԱՆԻ ՐԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԴՐԱՄՆԵՐ

պղինձ

207—208 Անկանոն կերտվածքի դրամ, թողարկված 1187 թ., Վրաստանում, Թամար թագուհու (1184—1213) անվան ու տիտղոսների արաբերեն արձանագրությամբ, ինչպես նաև վրացերեն մխեդրուլի գրելաձևի նշաններով:

209 Կանոնավոր կերտվածքի վարկային դրամ, թողարկված Վրաստանում, Քրոնիկոնի 410 (1200) թ., Թամար թագուհու անվան ու տիտղոսների արաբերեն արձանագրությամբ, Բագրատունյաց տոհմային նշանի, ինչպես նաև Թամարի ու նրա ամուսնու՝ Դավիթ Սոսլանի անունների վրացերեն համառոտագրություններով:

210—214 Կանոնավոր կերտվածքի վարկային դրամ, թողարկված Ռուսուդան թագուհու (1222—1245) գահակալության տարիներին, Քրոնիկոնի 447 (1227) թ., թագուհու անվան ու տիտղոսների արաբերեն արձանագրությամբ, ինչպես նաև վրացերեն համառոտագրություններով:

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

առծաթ

215 Դրամ, թողարկված Լևոն I Ռուբինյանին (1198—1219) թագավոր օծելու առթիվ, Քրիստոսի, գահակալի և Կիլիկիայի հայոց թագավորության զինանշանի պատկերներով, ինչպես նաև հայերեն արձանագրությամբ:

216 Դրամ, թողարկված Զապելի և Հեթումի համատեղ գահակալության

- (1226—1252) տարիներին, նրանց և խաչակիր առյուծի պատկերներով, ինչպես նաև հայերեն արձանագրությամբ:
- 217 Դրամ, թողարկված Հեթումյան Լևոն II-ի (1270—1289) գահակալության տարիներին, Սիս քաղաքում, ձիավոր միապետի և խաչակիր առյուծի պատկերներով, ինչպես նաև հայերեն արձանագրությամբ:
- 218 Թագվորին, դրվագված Սիս քաղաքում, Հեթումյան Օշինի (1320—1342) թագավորության տարիներին, գահին բազմած միապետի պատկերով, խաչի նշանով, ինչպես նաև հայերեն արձանագրություններով:

ՄՈՆԵՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՐՋԱՆ

աբժաթ

- 219 Կանիկ, թողարկված Վրաստանում, 1261—1262 թթ., առանց իշխանական անունների, բացառապես մահմեդականության բանաձևի արաբերեն արձանագրություններով:
- 220 Դիրհեմ, թողարկված Իրանում, Հուլաղույան Արղուն խանի (1284—1291) գահակալության տարիներին, ուլղուրերեն և արաբերեն արձանագրություններով, ինչպես նաև խաչի նշանով:
- 221 Դիրհեմ, թողարկված Թավրիզում, Հուլաղույան Աբու-Սաիդ խանի (1317—1337) գահակալության տարիներին, ուլղուրերեն և արաբերեն արձանագրություններով:
- 222 Դիրհեմ, թողարկված Իրանում, Աբու-Սաիդի գահակալության տարիներին, արաբերեն և ուլղուրերեն արձանագրություններով, իլխանական տոմարի 33 տարեթվի հիշատակությամբ (1332—1333):
- 223—225 Երկդիրհեմ, թողարկված Թավրիզում, Աբու-Սաիդի գահակալության տարիներին, ինչպես նախորդ օրինակները, բայց բացառապես արաբերեն արձանագրություններով, նվիրված միապետի տիտղոսների, մահմեդականության բանաձևի խոսքերի և չորս ուղղափառ խալիֆաների անունների հիշատակությանը:
- 226 Դիրհեմ, թողարկված Իրանում, Հուլաղույան Սուլեյման խանի (1339—1344) գահակալության տարիներին, ուլղուրերեն և արաբերեն արձանագրություններով, նվիրված միապետի տիտղոսների, ինչպես նաև մահմեդականության բանաձևի խոսքերին:
- 227 Դիրհեմ, թողարկված Իրանում, Հուլաղույանների իշխանության վերջին շրջանում (XIV դ.), բացառապես արաբերեն արձանագրություններով, նվիրված չորս ուղղափառ խալիֆաների անունների, ինչպես նաև մահմեդականության բանաձևի հիշատակությանը, բայց ջնջված տարեթվով:

պղիճձ

- 228—229 Ֆելս, թողարկված Վրաստանում, Զինգիզյան Մանգու խանի (1251—1260) գահակալության տարիներին, նրա անվան ու տիտղոսների, ինչպես նաև մահմեդականության բանաձևի արաբերեն արձանագրություններով:
- 230—231 Ֆելս, թողարկված Հայաստանում (Անի), Սուլեյման խանի գահակալության տարիներին, ծալապատիկ նստած մարդու պատկերով և արա-

- բերեն մաշված արձանագրություններով:
 232 Ֆելս, թողարկված Հայաստանում (Անի), XIV դ., առյուծի պատկերով
 և արաբերեն մաշված արձանագրություններով:

աբժաթ

- 233—234 Կերմանեուլի, թողարկված Արևմտյան Վրաստանում, XIII—XIV դդ.,
 Տրապիզոնի կայսրության արժաթե գրամների ընդօրինակությամբ:

ԻՐԱՆԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

ՍԵՅՅԱՆՆԵՐ

աբժաթ

- 235 Աբբասի, թողարկված Խուվեյդում, շահ Աբբաս I-ի (1587—1629) գահակալության տարիներին, պարսկերեն մաշված արձանագրությամբ:
 236 Աբբասի, թողարկված շահ Աբբաս II-ի (1642—1667) գահակալության տարիներին, Վրաստանում (Թբիլիսի), ջնջված տարեթվով, միապետի անվան ու տիտղոսների, ինչպես նաև մահմեդականության բանաձևի պարսկերեն արձանագրություններով:
